# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 հուլիսի 2022 թվականի թիվ 279-Ա

## «ԲՆԱԿԱՆ ՋՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 29-ի նիստում, քննարկելով «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***<u>1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 1-ին ««Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 36-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-00035/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Ընկերությունը թիվ 36-Ա որոշումն ստացել է 2022 թվականի փետրվարի 26-ին և 2022 թվականի մարտի 11-ին Հանձնաժողով է ներկայացրել դիրքորոշում:

2022 թվականի մարտի 29-ին Հանձնաժողովի գտնվելու վայրում տեղի է ունեցել Հանձնաժողովի նիստ (այսուհետ նաև՝ **Նիստ**), որի ընթացքում քննարկվել է Վարույթում առկա փաստական հանգամանքների վերաբերյալ հարցը:

Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 26-ի «Թիվ ՀԳ-00036/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 168-Ա որոշմամբ վարույթի ժամկետը 2022 թվականի մայիսի 1-ից եռամսյա ժամկետով երկարաձգվել է:

***<u>2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից առանց ջրօգտագործման թույլտվության «աղբյուրի ջուր» մակնշումով «Գեղարդ» անվանումով շշալցված ոչ գազավորված ջուր (այսուհետ նաև՝ **Ապրանք**) արտադրելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման

դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***<u>3. «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումը.</u>***

Ընկերությունը 2022 թվականի մարտի 7-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ հայտնել է, որ զբաղվում է խմելու ջրի շշալցմամբ:

Ըստ Ընկերության՝ շշալցումը կատարվում է քաղաքային ջրամատակարարման ցանցից՝ վերցնելով խմելու համար պիտանի ջուրը: Խմելու ջուրը մեխանիկական ֆիլտրների միջոցով ֆիլտրվելուց և ուլտրամանուշակագույն լույսով մանրէազերծվելուց հետո շշալցվում է պլաստիկ շշերի մեջ: Ընկերության կողմից շշալցումը համապատասխանեցվում է 32220-2013 ԳՈՍՏ-ով տրված նորմերին, Ընկերությունն ունի ԵՏՄ Համապատասխանության Հայտարարագիր (գրանցման համար՝ ԵԱՏՄ №AM-020/S.B-2767-2021): Պիտակի վրայի մակնշումը կատարվում է այդ հայտարարագրին համապատասխան:

Ընկերությանը չունի ջրօգտագործման թույլտվություն և ջուրը ձեռք է բերում շուկայից, իսկ ՀՀ-ում քաղաքային ջրամատակարարման ջրերը բոլորը խորքային են՝ վերցված աղբյուրից, և պիտանի են խմելու համար:

Ընկերությունը հայտնել է, որ սպառողներին մոլորեցնելու միտում չի ունեցել և պատրաստակամություն է հայտնել շտկել թույլ տված խախտումները՝ դրանց առկայության դեպքում:

Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը ջուրը շշալցնում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ նաև՝ **«Վեոլիա Ջուր» ընկերություն**) ստացված ջուրը, որն ապաքլորացվում է, միաժամանակ հայտնել է, որ Ապրանքի պիտակը շտկվել է:

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության կողմից կազմված «Թիվ ՀԳ-00035/22 վարույթով պատասխանող «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման հատկանիշների առերևույթ առկայության մասին» տեղեկանքի անչությամբ Ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի՝ «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 194-Ա հրամանի հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 13-ին «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ք. Երևան, Իսահակյան փող. 35 հասցեում գործող «Սաս» առևտրի օբյեկտում իրականացվել է դիտանցում (այսուհետ նաև՝ **Դիտանցում**), որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 194 արձանագրությունը:

Դիտանցման արդյունքում պարզվել է, որ «Սաս» առևտրի օբյեկտում վաճառքում առկա է Ընկերության կողմից արտադրված «Գեղարդ» անվանումով չգազավորված աղբյուրի ջուր, 0.5 լ. ծավալով:

2) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությունից (այսուհետ նաև՝ **Նախարարություն**) հայցվել է տեղեկատվություն խմելու «բնական» և «աղբյուրի» (չգազավորված և ոչ հանքային) ջրերի ջրօգտագործման թույլտվություն ստացած տնտեսավարող սուբյեկտներին տրված ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ:

Նախարարության՝ 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 1/10.2.3/394 գրության ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունը չունի ջրօգտագործման թույլտվություն:

3) Հանձնաժողովի նախագահի՝ 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ ԳԳ-217 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-217 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշումով ապրանքների անվանացանկը և դրանցից յուրաքանչյուրի պիտակը կամ լուսանկարը, որը կպարունակի պիտակին առկա ողջ տեղեկատվությունը,

2. Ընկերության կողմից ««Գեղարդ» անվանումով ոչ գազավորված աղբյուրի ջուր, 0.5 լ. ծավալով» ապրանքի (այսուհետ նաև՝ Ապրանք), ինչպես նաև «աղբյուրի ջուր մակնշումով շշալցված այլ ոչ գազավորված ջրերի իրացման սկզբնաժամկետների վերաբերյալ՝ նշելով ամսաթվերը,

3. Ընկերության կողմից 2020 և 2021 թվականներին Ապրանքի, ինչպես նաև «աղբյուրի ջուր» մակնշումով շշալցված այլ ոչ գազավորված ջրերի իրացման ծավալների (բնեղեն արտահայտությամբ) և դրանցից յուրաքանչյուրի իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ տարիների (ոչ ամբողջական տարի արտադրված լինելու դեպքում՝ ըստ ամիսների) և ըստ ապրանքների:

2022 թվականի ապրիլի 4-ին ներկայացրած գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքը վաճառել է 2020 թվականի հուլիսի 17-ից և մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ունեցել է 318 357 ՀՀ դրամի շրջանառություն: Նշված գրությանը կից Ընկերությունը ներկայացրել է Ապրանքի փոփոխված պիտակը:

4) ԵԱՏՄ №AM-020/S.B-2767-2021 համապատասխանության հայտարարագրի համաձայն՝ «Գեղարդ» ապրանքային նշանով, ապակյա և պոլիմերային տարաներով ( 0,5լ, 1,0լ, 1,5լ, 5,0լ, 18.9լ տարողություններով) շշալցված աղբյուրի խմելու ջուրը համապատասխանում է ԵԱՏՄ ՏԿ 044/2017 «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգին:

5) Հանձնաժողովի նախագահի՝ 2022 թվականի մարտի 18-ի թիվ ԳԳ-600 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-600 գրություն**) «Վեոլիա Ջուր» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. արդյո՞ք «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը 2020 և 2021 թվականներին ջուր է մատակարարել «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ Ընկերություն),

2. Ընկերությանը ջուր մատակարարելու դեպքում ո՞րն է մատակարարված ջրի ջրառի վայրը,

3. ի՞նչ եղանակով է իրականացվել Ընկերության ջրամատակարարումը՝ ջրամատակարարման ցանցով, թե՞ ինքնահոս եղանակով,

4. ըստ տարիների որքա՞ն է կազմել 2020 և 2021 թվականներին Ընկերությանը մատակարարված ջրի ծավալը՝ առանձնացնելով ըստ ջրամատակարարման եղանակների (ջրամատակարարման ցանց, ինքնահոս եղանակ),

5. արդյո՞ք Ընկերությանը մատակարարված ջրի բաղադրությունը, սկսած ջրառի վայրից մինչև բաժանորդին հասնելը, ենթարկվել է փոփոխության, այդ թվում՝ արդյո՞ք քլորացվել է՝ Եվրասիական տնտեսական միության «Փաթեթավորված խմելու ջրի, ներառյալ բնական հանքային ջրի անվտանգության մասին» թիվ 044/2017 տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 28-րդ կետերով նախատեսված եղանակներով ջրի մշակման դեպքում առանձին նշելով այդ մասին:

«Վեոլիա Ջուր» ընկերությունը, 2022 թվականի մարտի 28-ին Հանձնաժողովում ստացված թիվ 2491 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Վեոլիա Ջուր» ընկերության բաժանորդ չէ:

Միաժամանակ նշել է, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պարտավոր է մատակարարել խմելու ջուր, որը պետք է համապատասխանի Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 876-Ն հրամանով (այսուհետ նաև՝ **թիվ 876-Ն հրաման**) հաստատված սանիտարական նորմերին և կանոններին:

6) Հանձնաժողովի նախագահի՝ 2022 թվականի փետրվարի 14-ի թիվ ԳԳ-298 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-298 գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝

1. Ընկերության 2020 և 2021 թվականների տարեկան հասույթի չափերի վերաբերյալ՝ ըստ տարիների,

2. 2021 թվականի ընթացքում Ընկերության կողմից ««Գեղարդ» ոչ գազավորված աղբյուրի ջուր» մակնշմամբ ապրանքի, ինչպես նաև «բնական աղբյուրի ջուր» մակնշմամբ այլ ջրերի իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ապրանքների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-298 գրության, 2022 թվականի հունվարի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերության 2021 թվականի իրացման շրջանառությունը կազմել է ՀՀ դրամ:

ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն Ընկերության կողմից 2021 թվականին իրացված մինչև 5լ տարողությամբ շշալցված «բնական ջուր» և «խմելու ջուր» ապրանքների իրացումից հասույթը կազմել է ՀՀ դրամ:

5) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի https://www.psrc.am/ հղումով կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշմամբ խմելու

ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել «Վեոլիա Ջուր» ընկերությանը:

6) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի ապրիլի 18-ի թիվ 000439 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 000439 գրություն**) Հանձնաժողովը դիմել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ հայցելով դիրքորոշում հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 876 հրամանով սահմանված կարգով խմելու ջրի մշակումն արդյո՞ք հանգեցնում է ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակության և (կամ) հարաբերակցության փոփոխության,

2. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի քլորացված ջուրն ապաքլորացնելուց հետո արդյո՞ք այդ ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակությունը և (կամ) հարաբերակցությունը վերադառնում է մինչև ջրի քլորացումն առկա վիճակին:

3. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջուրն ապաքլորացման ենթարկվելուց (որի արդյունքում քլորի քանակությունը տեղավորվում է Կանոնակարգով նախատեսված չափերում) հետո արդյո՞ք այդ ջրի մականշվածքում Կանոնակարգի իմաստով թույլատրելի է «աղբյուրի» բառի մակնշումը:

Ի պատասխան թիվ 000439 գրության՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը հայտնել է հետևյալը.

1. Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 876 հրամանով սահմանված կարգով խմելու ջրի մշակումը չի հանգեցնում ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակության և (կամ) հարաբերակցության փոփոխության,

2. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի քլորացված ջուրն ապաքլորացնելուց հետո ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակությունը և (կամ) հարաբերակցությունը վերադառնում է մինչև ջրի քլորացումն առկա վիճակին,

3. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջուրն ապաքլորացման ենթարկվելուց հետո ջրի մականշվածքում չի թույլատրվում ոչ միայն «աղբյուրի» բառի մակնշումը, այլ նաև «բնական խմելու ջուր» մակնշումը, վերջինս

համաձայն «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 044/2017) համարվում է խմելու ջուր՝ մշակված:

Միաժամանակ առաջարկվել է մասնագիտական կարծիք ստանալու նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

7) Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի թիվ 001703 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 001703 գրություն**) Հանձնաժողովը դիմել է «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը, խնդրելով աջակցություն հետևյալ հարցերի կապակցությամբ.

1. թիվ 876 հրամանով սահմանված կարգով խմելու ջրի մշակումն արդյո՞ք հանգեցնում է ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակության և (կամ) հարաբերակցության փոփոխության,

2. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի քլորացված ջուրն ապաքլորացնելուց հետո արդյո՞ք այդ ջրի կազմում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակությունը և (կամ) հարաբերակցությունը վերադառնում է մինչև ջրի քլորացումն առկա վիճակին,

3. ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի քլորով մշակված խմելու ջուրն ապաքլորացման ենթարկվելուց (որի արդյունքում քլորի քանակությունը տեղավորվում է Կանոնակարգով նախատեսված չափերում) հետո արդյո՞ք այդ ջրի մականշվածքում Կանոնակարգի իմաստով թույլատրելի է «աղբյուրի» բառի մակնշումը և ի՞նչ պատճառաբանությամբ:

Ի պատասխան թիվ 000439 գրության՝ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը 2022 թվականի հունիսի 8-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ, ըստ էության հայտնել է, որ իրենց կողմից իրականացված փորձաքննությունների արդյունքում ջրի կազմում զանգվածային պարունակությունների փոփոխություններ չի արձանագրվել, քլորացված, հետո ապաքլորացված ջուրը Տեխնիկական կանոնակարգի իմաստով մշակված ջուր է:

10) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 6-ի թիվ 002313 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 002313 գրություն**) Հանձնաժողովը դիմել է «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերությանը՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերության (ֆիզիկաքիմիական և մանրէաբանական հետազոտությունների փորձարկման լաբորատորիա) կողմից 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԵԱՏՄ AM-020/S.B-2767-2021 համապատասխանության հայտարարագրի (հայտատու՝ «Բնական ջուր» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 03550614) ընդունման հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները՝ հայտնելով, թե դրանցից, ո՞ր փաստաթղթով է հիմնավորվում հայտատուի արտադրանքի՝ աղբյուրի ջրից շշալցվելու փաստը և նշելով այդ աղբյուրի անունը:

Ի պատասխան թիվ 002313 գրության՝ «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերությունը 2022 թվականի հունիսի 24-ին թիվ 002941 մուտքային համարով գրությամբ հայտնել է, որ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԵԱՏՄ AM-020/S.B-2767-2021 համապատասխանության հայտարարագիրն իր կողմից գրանցված չէ, այլ հայտատուին տրամադրել է փորձարկման արձանագրություն:

***<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. Ընկերությունն արտադրել և իրացրել է «աղբյուրի ջուր» մակնշումով «Գեղարդ» անվանումով շշալցված ոչ գազավորված ջուր:

2. Ընկերությունը ջրօգտագործման թույլտվություն չունի:

3. Ընկերությունը «Վեոլիա Ջուր» ընկերության բաժանորդ չէ, այդուհանդերձ շշալցնում է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից մատակարարված ջուրը:

4. Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջուրը պետք է համապատասխանի թիվ 876-Ն հրամանով հաստատված պահանջներին, այդ թվում՝ վարակազերծվի քլորով:

5. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշմամբ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել «Վեոլիա Ջուր» ընկերությանը:

6. «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից իր բաժանորդներին մատակարարվող ջուրը Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն «մշակված ջուր» է:

7. ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ Ընկերության կողմից 2021 թվականին իրացված մինչև 5լ տարողությամբ շշալցված «բնական ջուր» և «խմելու ջուր» ապրանքների իրացումից հասույթը կազմել է                ՀՀ դրամ:

***<u>6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>***

**1)** ***<u>Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>***

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունն անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները առկայության ցանկացած դեպքում:

Տվյալ դեպքում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է անբարեխիղճ մրցակցության դրսևորման՝ հասարակության մոլորեցման առերևույթ առկայության հիմքով, ուստի քննարկման ենթակա է Ընկերության կողմից հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայության հարցը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրացվող ապրանքի վերաբերյալ մոլորեցնող, այդ թվում՝ թերի, կեղծ տվյալի (տեղեկության) տրամադրումը կամ այնպիսի տվյալի (տեղեկության) տրամադրելը, որը հնարավորություն չի տալիս լիարժեք և ամբողջական պատկերացում կազմելու ապրանքի մասին, ինչպես նաև

իրացվող կամ գովազդվող ապրանքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ որևէ տվյալ կամ տեղեկություն չտրամադրելն Օրենքով հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցություն է:

Վարույթի փաստերի համաձայն՝ Ընկերությունն արտադրել և իրացրել է «աղբյուրի ջուր» մակնշումով «Գեղարդ» անվանումով շշալցված ոչ գազավորված ջուր, իսկ շշալցրել է «Վեոլիա Ջուր» ընկերությունից՝ ջրամատակարարման կենտրոնացված համակարգերից մատակարարվող ջուրը:

***<u>Նման պայմաններում Հանձնաժողովն էական է համարում այն հարցի պարզաբանումը, թե արդյոք ջրամատակարարման կենտրոնացված համակարգից ստացված ջուրը կարող է համարվել «աղբյուրի ջուր»:</u>***

Տեխնիկական կանոնակարգի 37-րդ կետի համաձայն՝ «Փաթեթավորված խմելու ջրի մականշվածքում թույլատրվում է օգտագործել բառեր, որոնք բնութագրում են դրա բնական հանքաղբյուրներից ծագումը (օրինակ՝ «աղբյուրի», «հանքաղբյուրից» և այլն) միայն այն պայմանով, որ տվյալ ջուրն ունի համապատասխան ծագում և փաթեթավորվում է կամ առանց մշակման, կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն սույն Տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 27-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական հանքային ջրի համար, և սույն տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 28-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական խմելու ջրի համար:

Տեխնիկական կանոնակարգի 26-րդ կետի համաձայն՝ բնական հանքային ջրի, բնական խմելու ջրի մշակման համար թույլատրվում է կիրառել մշակման այն եղանակները, որոնք այդ ջրի կազմում չեն փոփոխում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակությունը և (կամ) հարաբերակցությունը, այդ թվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 27-րդ և 28-րդ կետերով նախատեսված մշակման եղանակները:

Տեխնիկական կանոնակարգի 28-րդ կետի համաձայն՝ բնական խմելու ջրի համար թույլատրվում է կիրառել մշակման հետևյալ եղանակները՝

ա) երկաթի, մանգանի, ծծմբի, մկնդեղի միացությունների բաժանումը՝ օդով և (կամ) թթվածնով մշակելու միջոցով.

բ) լուծված ածխածնի դիօքսիդից ամբողջական կամ մասնակի ազատումը՝ բացառապես ֆիզիկական մեթոդներով.

գ) ածխածնի դիօքսիդով հագեցումը.

դ) ջերմաստիճանի նվազեցումը և (կամ) բարձրացումը.

ե) սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող քանակությամբ ի սկզբանէ առկա տարրերի կամ ռադիոակտիվ տարրերի խտացման նվազեցումը և (կամ) բաժանումը, այդ թվում՝ զտման կամ դեկանտացման միջոցով.

զ) ուլտրամանուշակագույն ճառագայթումը (ՈւՃ-վարակազերծումը).

է) օզոնավորումը:

Տեխնիկական կանոնակարգի 29-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար քլորի պատրաստուկների կիրառումը:

Տեխնիկական կանոնակարգի վերը նշված դրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ շշալցված ջրի պիտակին «աղբյուրի ջուր» մակնշումը թույլատրելի է միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, այն է.

1. տվյալ ջուրն ունի աղբյուրի ծագում,

2. փաթեթավորվում է առանց մշակման կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն Տեխնիկական կանոնակարգով թույլատրված եղանակներ,

3. շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար արգելվում է քլորի պատրաստուկների կիրառումը:

Միաժամանակ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Տեխնիկական կանոնակարգով ուղղակիորեն սահմանված է շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար քլորի պատրաստուկների կիրառման արգելք, ընդ որում, Տեխնիկական կանոնակարգի համակարգային վերլուծությունից բխում է, որ «աղբյուրի ջուր» մակնշումով իրացվող ջուրն ի սկզբանե և որևէ փուլում չի կարող ենթարկվել Տեխնիկական կանոնակարգով արգելված ազդեցության, այն է՝ մշակվել քլորով և ապաքլորացումից հետո համարվել «աղբյուրի ջուր»: Ավելին, Տեխնիկական կանոնակարգի իմաստով այն դառնում է «մշակված ջուր»՝ ջուր, որը ստացվել է տարբեր ջրառներից, մշակվել է ցանկացած ձևով, նախատեսված է մարդու կողմից անմիջական օգտագործման համար և կարող է պարունակել բնական կերպով իր մեջ ներկա հանքային նյութեր կամ հատուկ ավելացված հանքային նյութեր, ինչպես նաև ածխածնի դիօքսիդ (Տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետի 8-րդ պարբերություն):

Նշվածի մասին է վկայում նաև Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պարզաբանող դիրքորոշումը, և «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տրամադրած մասնագիտական կարծիքը:

Վերոնշյալ վերլուծությունները համադրելով Վարույթի փաստերի հետ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ջրամատակարարման կենտրոնացված համակարգից ստացված ջուրը չի կարող համարվել «աղբյուրի ջուր»:

Այսպես, «Վեոլիա Ջուր» ընկերությունը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշման համաձայն ստացել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման լիցենզիա, ուստի «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ջրամատակարարման կենտրոնացված համակարգով մատակարարվող ջուրը պետք է համապատասխանի թիվ 876-Ն հրամանով հաստատված պահանջներին, այդ թվում՝ վարակազերծվի քլորով: Մասնավորապես, Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» Թիվ 876-Ն հրամանով հաստատված «Խմելու ջրի մշակման ժամանակ ջրամատակարարման համակարգ ներմուծվող և առաջացող վնասակար քիմիական նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների (սթկ/ նորմերը» վերտառությամբ հավելված 3-ով սահմանվում է, որ ազատ քլորով ջրի

վարակազերծման դեպքում ջրի հետ դրա կոնտակտը պետք է լինի 30 րոպեից ոչ պակաս, կապված քլորով -60 րոպեից ոչ պակաս: Մնացորդային քլորի պարունակության հսկողությունն իրականացվում է մինչև ջրի ջրաբաշխիչ ցանց մղելը: Ջրում ազատ և կապված քլորի միաժամանակ առկայության դեպքում դրանց ընդհանուր կոնցենտրացիան չպետք է գերազանցի 1,2 մգ/լ: Առանձին դեպքերում ՀՀՀ կենտրոնի համաձայնությամբ խմելու ջրում հնարավոր է թույլատրել քլորի ավելի բարձր կոնցենտրացիա:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը փաստում է, որ բացակայում է Ընկերության կողմից շշալցվող ջուրը որպես «աղբյուրի ջուր» մակնշելու՝ Տեխնիկական կանոնակարգով սահմանված անհրաժեշտ պայմաններից մեկը, ինչը բացառում է շշալցված ջրի՝ «աղբյուրի ջուր» հանդիսանալու հանգամանքը: Մասնավորապես, Տեխնիկական կանոնակարգի 29-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար քլորի պատրաստուկների կիրառումը, մինչդեռ Վարույթի փաստերի համաձայն, շշալցվող ջուրը, հանդիսանալով կենտրոնացված ջրամատակարման համակարգով մատակարարվող ջուր, նախապես մշակվում է քլորով, ուստի Տեխնիկական կանոնակարգի իմաստով այն դառնում է «մշակված ջուր»: Հետևաբար Հանձնաժողովը քննարկման առարկա չի դարձնում Տեխնիկական կանոնակարգով աղբյուրի ջրին ներկայցվող մյուս՝ աղբյուրի ծագման և միայն Տեխնիկական կանոնակարգով թույլատրված եղանակներով մշակված լինելու պայմանները պահպանված լինելու հարցերը, հաշվի առնելով, որ որևէ փուլում քլորացված ջրի առկայությունն արդեն իսկ բացառում է շշալցված ջուրը որպես «աղբյուրի ջուր» մակնշելը:

Միաժամանակ, Հանձնաժողովի գնահատմամբ Վարույթի շրջանակներում ներկայացված 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԵԱՏՄ AM-020/S.B-2767-2021 համապատասխանության հայտարարագիրը Ապրանքի՝ «աղբյուրի ջուր» հանդիսանալու վերաբերյալ արժանահավատ ապացույց չի կարող դիտվել՝ հաշվի առնելով, որ դրանում պարունակած տեղեկատվության համաձայն այն տրվել է «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերության կողմից, մինչդեռ նույն ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 24-ին տրված թիվ 002941 մուտքային համարով գրության համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԵԱՏՄ AM-020/S.B-2767-2021 համապատասխանության հայտարարագիրն իր կողմից գրանցված չէ, այլ հայտատուին տրամադրվել է փորձարկման արձանագրություն:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ սպառողները, ձեռք բերելով Ընկերության արտադրած «աղբյուրի ջուր» մակնշումով «Գեղարդ» անվանումով շշալցված ոչ գազավորված ջուրը, կարող են մոլորվել ձեռքբերվող ապրանքի վերաբերյալ՝ կարծելով, թե ձեռք են բերում «աղբյուրի ջուր», մինչդեռ շշալցված ջուրը, թեև ունի աղբյուրի ծագում, ջրամատակարարման կենտրոնացված ցանցի միջոցով բնակչությանը մատակարարվող մշակված (քլորացված) ջուրն է, որն Ընկերությունն ապաքլորացնում է և շշալցնում՝ ներկայացնելով որպես աղբյուրի ջուր:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշումով չգազավորված ջրերի արտադրությունը և իրացումը, երբ այդ ապրանքը Կանոնակարգի իմաստով չի հանդիսանում «աղբյուրի ջուր», հասարակության մոլորեցման

դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն է, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 6-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է վարույթի ընթացքում հաստատված փաստական հանգամանքների քննարկման արդյունքում Հանձնաժողովի հայեցողությամբ՝ հաշվի առնելով Մեթոդաբանությամբ ամրագրված դրույթները և վարույթի առանձնահատկությունները:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի գումարի հաշվարկումն իրականացնելիս հիմք է ընդունվում իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա վաճառքի հասույթը կամ ընդհանուր հասույթը:

Տվյալ պարագայում իրավախախտման դադարեցման պահին (իրավախախտումը դադարեցված լինելու հարցը մանրամասն կքննարկվի ստորև) նախորդող տարվա՝ 2021 թվականի՝ Ընկերության կողմից իրացված մինչև 5լ տարողությամբ շշալցված «բնական ջուր» և «խմելու ջուր» (փոխադարձ փոխարինելի ապրանք) ապրանքների իրացումից ստացված հասույթը, ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն, կազմել է

ՀՀ դրամ:

Իրավախախտման ծանրության խումբը.

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 2.5 տոկոս դրույքաչափով:

Իրավախախտման տևողությունը.

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը:

Սույն գործով Ընկերության կողմից Ապրանքի իրացման փաստ արձանագրվել է

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է 318 454 ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= x 2,5% x = 318 454 ՀՀ դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն իրավախախտման մասով որպես ծանրացնող հանգամանքներ լինելու վերաբերյալ որևէ ապացույց կամ հիմք Հանձնաժողովի կողմից չի հայտնաբերվել:

Մեթոդաբանության 29-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատասխանատվության միջոցը մեղմացնող հանգամանք է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելը, որը գնահատելիս հաշվի է առնվում հանգամանքը ուղղակիորեն ընդունելը, իրավախախտման հետևանքների վերացումը կամ դրանց վերացման ուղղությամբ գործողությունների ձեռնարկումը:

Տվյալ դեպքում Ընկերությունը, ըստ էության ընդունել է իրավախախտման փաստը և վերացրել է իրավախախտումը, մասնավորապես, ներկայացրել է նոր պիտակ, որի վրայից հեռացվել է «աղբյուրի» մակնշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ վարույթով պատասխանողի կողմից ներկայացված տվյալները և տեղեկությունները գործում հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության պայմաններում Հանձնաժողովի կողմից ընդունվում են որպես հավաստի: Ընդ որում, Հանձնաժողով կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացնելու համար վարույթով պատասխանողը կրում է պատասխանատվություն:

Այսպիսով, հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության պայմաններում Հանձնաժողովը հաստատված է համարում Ընկերության կողմից իրավախախտման հետևանքները վերացված լինելու փաստը:

Սույն իրավախախտման մասով որևէ ծանրացնող հանգամանք չի հաստատվել, իսկ որպես մեղմացնող հանգամանք հաստատվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտման հետևանքները վերացնելով իրավախախտում կատարելու փաստն ընդունելը:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 5%:

***Տուգանքի հաշվարկը.***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 302 532 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

S= Բ + Բ x (Ծ - Մ) = 318 454 + 318 454 x (0%-5%) = 302 532 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության նկատմամբ նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 302 532 (երեք հարյուր երկու հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

***3) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ դեպքում Ընկերությունը ներկայացրել է իրավախախտումը վերացրած լինելու վերաբերյալ ապացույց, մասնավորապես, փոփոխված պիտակի լուսանկարը, որտեղ բացակայում է «աղբյուրի» մակնշումը, ուստի վերացել է Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը:

***7. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշումով «Գեղարդ» անվանումով շշալցված ոչ գազավորված ջուր

իրացնելը որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 302 532 (երեք հարյուր երկու հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Բնական ջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետը, դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հուլիսի 29

Երևան